


891.71
34-19



30 OCT 2006

891.71

891.71	ՀԱՅԱՍՏԱՆ
34-19	ՕՐԻՆԱԿԱԿՑՈՒԹՅՈՒՆ
	ԴՐԱՄ
18915	8/011181

891.71
34-19
մր

I. ՅԱԻԵԼԻԱԾ «ՅՈՒՃԱՐԱՐ» -Ի

[19 NOV 2010]

№ 9004.

ԿԱՆԱՑԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ

ԴԱՎԻԴ ՄԱՆՈՒԿՅԱՆ — ԳԻՒՂԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

≡ ԱԴԱՐ ՈՒ ԵՒԸ

100/
450

ԿԱՏԱԿՐՔՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄՐ

Հեղինակ — ԿԱԿՈՎԱԼԵԻ
Թարգմանիչ — Ա. ՎՐՈՅՔ



ԹԻԳԼԻՄ
ԵԼԵՎՏԻՐԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ա. ԱՐԱԽԵԱՆ
1907

(21)

09.07.2013

12,189

ԱՆՁԻՆՔ

Պիեր, — գիւղացի.
ԺԱՆՔԸ, — նորա կինը
ԿՈՄՄ ԴԼ ՄՕՐԵ — կալւածատէր
ԾԱՌԱ,

Настоящая пьеса подъ заглавием "Женское любопытство," или "Адамъ и Ева," разрѣшается г. Главно-командующимъ къ представлению края.

Предсѣдатель Комитета Гагель
Секретарь Н. Меликъ-Нубаровъ



ԱՐԱՐԻԱԾԱ

Տեսարանը ներկայացնում է անտառ

Բնմի խորքում աջակողմբ մի խրծիթ. իսկ ձախակողմը, նախարձնում
մի ծառ, նրա տակը նստարան, մօտը ձախարակ է դրուած:

1) Պիեր. առանձին:

Մի հաստ կոծղ կոտրել աշխատելով, զայրացած. ԱՇ, ը՛հ, ը՛հ
ը՛հ, այ անբան անասուն, ոչ մի կերպով չի կոտր-
ւում. քրտինքը սրբում է և ծուրի մէջ թքելով. անա, ը՛հ, ը՛հ,
ը՛հ, չէ, բան չէ դուրս գալիս. բարկացած հրում է ոտքով.
այ չար սատանա. մարդ չարչարփում է, քրտնում է,
ձեռքերին կոշտեր են դուրս գալիս, նա էլի վեր է ընկած,
իբրև թէ չէի շարժել հառաջելով. ախ', ախ', երբ նայում
եմ ու լաւ մտածում կեանքի վերա, դուրս է գալիս որ
մարդս ամենազժեաղդ արարածն է աշխարհիս վերա. ճշ-
մարիտ. հէնց օրինակի համար վերցրու այս ձախարակը.
Աստուած է վկա որ նա էլ ինձանից երջանիկ է...
բան չէ շինում, ոչինչի վերա չի մտածում, ոչ մի բանի
կարիք չունի, ոչ ցուրտ գիտէ և ոչ սով. ապրում է ու
ապրում, պրծաւ զնաց: Իսկ ես խեղճա, գոնէ մի կտոր չոր
հաց ձեռք բերելու համար—վաղ վեր կաց, ուշ քնիր, աշխա-
տիր, չարչարփիր, և ինչու համար հարցնում եմ ձեղ. ին-
չու համար այս բոլորը—որպէս զի ապրենք ու սովից չը-
մեռնենք. և սա կեանք է, դուք սրան կեանք՝ էք ասում...
սա ոչ թէ կեանք, այլ—թուն թքումէ և ոտքով սրբում. այս է

որ կայ. իսկ իմը այդ էլ չարժէ թէ չէ ոգերուելով. մարդու բաղ-
դաւորութեան համար Աստւած սկզբից ամեն բան
տեց. այսինքն որ նա ուզածին չափ ուտէ և մար-
դուն մնում էր որ միայն ուտէր, քնէր և ոչինչ
չիներ—կարծեմ այս լաւ է, այնպէս չէ. ցաւով. բայց ոչ.
այս բաւական չհամարւեց, քիչ թւաց: Քիչ թւաց որ ա-
սում եմ ինձ չհասկանաք, ոչ. ահա թէ այդ ինչպէս ե-
ղաւ: Աստւած Աղամինու Եւային դրախտ պարզեց, թոյլ
տալով որ ամեն բանից օգտւեն, միայն հրամայեց որ
խնձորից չուտեն, միենոյն ժամանակ զգուշացրեց որ
ուտելիս ամեն բանից պիտի զրկւեն: Աղամ ձեռք չէր տա-
լիս. իսկ Եւան, տուր հա տուր. տուր հա տուր. Աղամ ուշա-
գրութիւն չգարձրեց և երբ տեսաւ որ այդ էլ չիլինում—
սպանաց. Եւան որ այս տեսաւ՝ աղմուկ, աղաղակ, լաց
ու կոծ. կնիկ է խ'օ գիտէք. էնքան արեց որ Աղամն էլ
վերցրեց տւեց ու... Երկուսն էլ դրախտից դուրս փոնդւե-
ցան... Բայց գիտէք թէ դրախտը ինչպիսի տեղ էր... Ի՞նչ
գեղեցիկ բաներ կային այնտեղ, որքան հարստութիւն. մի
խօսքով ճիշտ մեր կալւածատէր կոմսի պալատին պէս.
Ինչ որ սիրտ ուզէր այնտեղ կար. իսկ այժմ. կոծղը հրելով.
Այ քեզ դրախտ... ցոյց տալով ձեռքի միջի կոշտերը՝ այս էլ
նրա հաճոյքն ու երջանկութիւնը. լալիս է. եւ չգիտեմ
ինչու պատմեցին ինձ այս պատմութիւնը. Եթէ չէի գի-
տացել աւելի հանգիստ կը լինէի, որովհետև հէնց որ գոր-
ծի եմ ձեռնարկում իսկոյն այդ պատմութիւնն եմ յիշում,
իսկ յիշում եմ թէ չէ սկսում եմ լաց լինել և էլ ոչ մի
բան գլուխս չի մտնում. Ախ՛, ախ, ախ, բայց և այնպէս
շատ լաց լինելուց էլ բան չի դուրս գայ, պէտք է փայտ կոտ-
րել, թէ չէ կինս կուգայ ու տեսնէ թէ քիչ փայտ կայ՝
ո՞վ գիտէ ինձ առանց ճաշի թողնէ: Իմ կինս խօ ձեր գի-
տեցածներից չէ, այսինքն կայ էլի, բայց այս պատմութիւնը
լսելուց յետո ինձ թւում է թէ նա մի սատանա է:
Բնմի նտեղի Ժանէտի նրգելու ձայնն է լավում. իսկ Պիէր աշխուժով սկսում

է բանել. ահա անունը տւեցինք, ինքնէլ լուսն ընկաւ... ախ՝
կեանք, կեանք, մի մեռնէինք ու ազատւէինք:

2) ՆՈՅՆ ԵՒ ԺԱՆԷՏ

ԺԱՆԷՏ. Չեռքին սակառ վաղելով ներս է մտնում և դէպի կուլիսներն է խօսում
Շնորհակալ եմ ձեզանից բարեկամա...: Ինչպէս ո... չեմ լը-
սաւմ... պարել... կարելի է... լաւ. տեսնենք... Պիէրին.
բարե հոգիս:

Պիէր. Սատուծու բարին. շարունակում է գործել:

ԺԱՆԷՏ. Տարա հաւաքած սունկերը վաճառանոցում ծա-
խեցի և այս գեղեցիկ կոշիկները գնեցի ինձ համար. ա-
մենքը, ամենքը կանգնած ինձ էին նայում, իսկ ես ու-
շագրութիւն անգամ չէի դարձնում, այլ շտապով վազելով
քեզ մօտ եկա. դէ արի գգւիր, համբուրիր ինձ... դէ
շնուտ... քեզ եմ սպասում. դէ շնուտ:

Պիէր. Զեմ գայ:

ԺԱՆԷՏ. Սպանալի. Ինչպէէս... այդ ինչ ասեցի՞ր. կարծեմ
ասեցիր թէ չեմ գայ. դու ինձ լաւ նայիր. Երեսը ներկայացնե-
լով. դէ արի... անհամբերութեամբ ոտքերը գետին է խփում. շտապիր.
խլացար ինչ եղար. հրամայական. դէ համբուրիր ասում եմ
քեզ:

Պիէր. Հառաչելով ժողովուրդին. Ինչպէս. ես չամեցի՞ թէ սա-
տանա է: Համբուրումէ:

ԺԱՆԷՏ. Ուրախ. Ալդ վաղուց պէտք է անէիր. հիմի կարող
ես նայել իմ կոշիկների վերա և ուղղակի փառաւորւել.
հիանալի բան է, քանի ծնւել էի այդպիսի բան չէի հագել...
ճիշտ է որ սրանք առաջւայ ունեցածներիցս աւելի թանգ
են, բայց սրա մէջ լաւ կերևան տօտիկներս. այնպէս
չէ...

Պիէր. Զանելով. Շատ լաւ:

ԺԱՆԷՏ. «Շատ լաւ,» փէտի կտոր. Ոտքը նրա քթին դէմ անելով.
առաջ մի նայիր է...»

Պիկը. Տեսայ, լււ:

ԺԱՆԷԾ. Իւր ոտքով զմայլած. ՏԵՍ, քեզ համար ի՞նչ եմ բերել. Սակառի միջից հանումէ մի մետաքսեայ Թաշկինակ. ՏԵՍ ի՞նչ գեղեցիկ թաշկինակ է. տեսնում ես, քեզ էլ չեմ մոռացել...

Պիկը. Չեռք մեկնելով. Տուր տեսնեմ:

ԺԱՆԷԾ. Թաշկինակը ծածկելով. Ի՞նչպէս չէ, էդ է որ տւեցի... Պիկը. Բայց չէ որ այդ իմ է:

ԺԱՆԷԾ. Դեռ ոչ, առաջ դու քո գործը տես. աշխատիր: Նստում է ծախարակի մօտ.

Պիկը. Գնա բանիդ. «աշխատիր», «աշխատիր» թութակի պէս մի բառ ես սովորել առաւօտից մինչև կէս գիշեր շարունակ էդ ես ասում. «աշխատիր...»

ԺԱՆԷԾ. Ի՞նչ անեմ, հոգիս, ես ինքս էլ ձեռներս ծալած չեմ նստել. աշխատութիւնը մեր ճակատագիրն է. եթէ չ'աշխատենք սոված կը մնանք:

Պիկը. Այդ լււէ. դատարկ նստել ես ու մեծ մեծ բըդումես:

ԺԱՆԷԾ. Ի՞նչպէս թէ դատարկ նստել եմ:

Պիկը. Այնպէս էլի, դադարկ:

ԺԱՆԷԾ. Ճախարակը ցոյց տալով. Այս ի՞նչ է հապա:

Պիկը. Ո՞րը:

ԺԱՆԷԾ. Զե՞ս տեսնում:

Պիկը. Ի՞նչ տեսնելու բան կայ այդտեղ:

ԺԱՆԷԾ. Բայց միթէ սա գործ չէ. միթէ ես չեմ աշխատում:

Պիկը. Ծաղրելով. Ի՞նչպէս չէ, աշխատում ես. ի՞նարկէ որ գործ չէ. այդ տեղ ոչ թէ դու այլ ճախարակն է աշխատում. մի շատ մեծ բան է այդ պտոյտ տալը:

ԺԱՆԷԾ. Ուրեմն ի՞նչ ես հրամայում որ անենք:

Պիկը. Գործ չ'կայ շինելու. խաթուն խօ չես. կարող ես փայտ կոտրել, ջուր կրել, խոտ հնձել...

ԺԱՆԷԾ. Ինչ ասացիր... փայտ կոտրել. խոտ հնձել. բայց միթէ այդ իմ գործն է:

Պիկը. Հապա ի՞մնէ:

ԺԱՆԷԾ. Միթէ ես տղամարդ:

Պիկը. Հապա ես եմ տղամարդը... ալսինքն ես ուրիշ բան էի ուզում ասել... և որովհետեւ տղամարդ ծնւելու դժգութիւնը ունեցար, դրա համար էլ պարտա...

ԺԱՆԷԾ. Պարտաւոր ես աշխատել, չարչարւել...

Պիկը. Իսկ դու կոտրաւես ու աչքով անես:

ԺԱՆԷԾ. Ի՞նչպէս. այդ ի՞նչ ասացիր. ես ումն եմ աչքով արել. դէ սասա՛, խօսիր, ումը...

Պիկը. Ես շատ գիտեմ թէ ումը... ամէնքին...

ԺԱՆԷԾ. Ուրեմն քո ասելով ես ծո՞յլ եմ, կոտրաւո՞ղ եմ...

Պիկը. Թէ մէկն ես և թէ միուսը:

ԺԱՆԷԾ. Ես կոտրաւումեմ, ես ծո՞յլ եմ... ախ տէր իմ Աստւած. Բայց միթէ ես քիչ եմ աշխատում, քիչ եմ չարչարվում:

Պիկը. Ե՛... նա չարչարւում է եղել... ես այդ չէի իմացել... մի չէ կարելի իմանալ թէ ո՞րն է սա քո շինած բանը... հեռու չ'գնանք. վերցնենք հէնց այսօրւա սունկի փողերը. ի՞նչ արեցիր. հը... ի՞նչ արեցիր... ի՞նչի վերա ծախը. ի՞նչպէս իմացիր. այդ սահամանների վրա... իսկ ես ամբողջ օրը անտառումն էի. տես քիթ ու բերանս բոլոր չանկըթւեց և մինչև հիմայ էլ կարծես թէ մէջքս կոտրած լինի... իսկ դուն ի՞նչ ես շինել....

ԺԱՆԷԾ. Զե՞ս հրամակի որ բոբլիկ ման գամ. հէ...

Պիկը. Բոբլիկ... էհ... չէ կարելի քեզ հետ խօսել...

նիկ ես, կնիկ. ուրիշ ոչինչ...

ԺԱՆԷԾ. Լաւ մեղադրանք է:

Պիկը. Էհ, արդէն դուք ստեղծւած էք հագնւելու, զուգւելու, ձեր մարդոցը չարչարելու և նրանց ամեն տեսակ ուրախութիւնից զրկելու համար:

ԺԱՆԵՏ. Մի ասա՛ տեսնեմ, քանի պսակւել ենք ես ե՞րբ
եմ քեզ չարչարել. ինչից եմ քեզ զրկել:
Պիկը. Ցիշիր եւային և կիմանաս թէ ես ինչից եմ
զրկւել...

ԺԱՆԵՏ. Ի՞նչ ես ասում:

Պիկը. Ինչ եմ ասում. այն ով էր մեր դրախտից վրունդ-
ւելու պատճառը. հա՞ ով էր— եւան. ով էր մեր նըանից
զրկւելու պատճառը— եւան. ում ախորժակն էր բաց-
ւել անպատճառ ինձորն ուտելու... ա՞ ա՛... ինչո՞ւ ես լը-
ռում. պապանձւեցմը, այ, եթէ նա ազդ տարօրինակ ա-
խորժակը չունենար, այն ժամանակ ես ոտներս ձգած ա-
ղավարի հանգչելիս կըլինէի. ոչ փայտ կըկուրէի, ոչ իսու
կը հնձէի և ոչ ջուր կըկրէի:

ԺԱՆԵՏ. Հիմի էլ քեզնից է կախւած այդ. կարող ես՝ աշշ-
խատել. բայց այն ժամանակ հաց չ'պիտի ուտես... իսկ
ես ի՞նչ լաւ կուտեմ...

Պիկը. Գիտե՞մ, գիտե՞մ, որ դու ամեն բանի ընդունակ
ես... դրա համար էլ թէկ ծուլանում եմ, բայց այսուա-
մենայնիւ աշխատում եմ... օհ... և այնպէս էլ ախորժակ
ունեմ որ քիչ է մնում ինքս ինձ խորովեմ ուտեմ: Այ,
ես գալի պէս սոված եմ. դու խօ՛ իսկի չէս էլ մտածում
կերակուր պատրաստելու մասին:

ԺԱՆԵՏ. Իոկ փայտը ուր է...

Պիկը. Փայտ քի՞չ կայ, ինչ է... առաւօտւանից ի վեր դրա
վրայ եմ քրտինք թափում. և ով է՞ մեղաւորը որ ես քըր-
տնում եմ. դարձեալ դու:

ԺԱՆԵՏ. Ե՞ս:

Պիկը. Դէ դու չես, ուրեմն քո եւա նախամայրն է:

ԺԱՆԵՏ. Նա ինչո՞ւ է մեղաւոր:

Պիկը. Նրա համար մեղաւոր է որ ինչո՞ւ կերաւ ինձորը:

ԺԱՆԵՏ. Իսկի էլ նա մեղաւոր չէ:

Պիկը. Է՛, ուրեմն ով. Ե՞ս եմ մեղաւորը. հերիք չէր իրա
ուտելը, Աղամին էլ ուտացըեց:

ԺԱՆԵՏ. Նա ինչի՞ կերաւ:

Պիկը. «ինչի կերաւ, ինչի կերաւ» ուտել էր ուզում ու
կերաւ, նա ի՞նչ էր իմանում թէ վերջը այս է լինելու:

ԺԱՆԵՏ. Որ կերաւ նշանակում է մեղաւորն էլ ինքն է:

Պիկը. Ո՞վ, Աղամը:

ԺԱՆԵՏ. Ի հարկէ: անութ ու մասն փայլ չեմ:

Պիկը. Աղամը:

ԺԱՆԵՏ. Այո՛:

Պիկը. Ոչ, մեղաւորը եւան էր: վեճութ չեմ ու անութ

ԺԱՆԵՏ. Ոչ, Աղամն էր:

Պիկը. Զէ, եւան էր, եւան: Ս ուժարով չ'կայ հայ

ԺԱՆԵՏ. Ուզում ես ես քեզ փաստով պապացուցանեմ:

Պիկը. Ոնց չէ. կ'ապացուցանես:

ԺԱՆԵՏ. Ինձ լիիր. երբ եւան կամենում էր ինձորը ու-

տել—թէկ ասում են իրը թէ նա ինձանից բարձրահասակ

էր—բայց այնուամենայնիւ ինձորը այնքան բարձր էր

կախւած, որ չէր կարողանում պոկել. այն ժամանակ

Աղամ իրը բարի և քաղաքավարի մարդ կռացաւ. լսաւմ

ես. Աղամ ծառի տակ կռացաւ որ եւան նրա կռնակի

վերա կանգնի ու կարողանա ինձորը պոկել. Նրա ձականին

խփելով. Է, հիմի ով է՞ մեղաւորը:

Պիկը. Ով է՞, եւան. ինձորը ինչո՞ւ էր պոկում

ԺԱՆԵՏ. Գնա դուն էլ. ոչինչ չես հասկանում. Աղամն էր

մեղաւոր. ինչի՞ էր կռանում:

Պիկը. Չարէ՞ն ինչ երեր «ախ»ը, «վախ»ը, լացը սկսել

էր 'ի հարկէ պէտք է կռանար:

ԺԱՆԵՏ. Քո բոլոր ասածներդ յիմարութիւններ ին:

Պիկը. Գիտեմ. գիտեմ. իսկ այն խեղճ ողորմելին— իբրև

թէ ոչինչ չէր հասկանում... ախ ու վախը որ սկսեց

էլ ինչի՞ մնում նրան անել...

ԺԱՆԵՏ. Արգելել. թոյլ չ'տալ, զսպէլ նրա ցանկութիւնը,

ոչ թէ կնոյ զուռնայի վրա պար գալ. համա տղա-

մարդ է եղել հա...

Պիկը. Տղամարդ է եղել. տղամարդ է՝ եղել. դու էլ կարծում ես ամեն տղամարդ ինձ պէս հաստատ բնաւորութեան տէ՞ր է. ես պէտք է լինէի նրա տեղ որ...

ԺԱՆՔ. Է՛. դու ի՞նչ կանէիր:

Պիկը. Ի՞նչ պիտի անէի. չէի կոանա ու պրծաւ գնաց...

ԺԱՆՔ. Կարծում ե՞ս: Իսկ եթէ ես լինէի Եւայի տեղ...

Պիկը. Ոչ թէ դռւ, այլ քեզ պէս 10-ն էլ գային էլի չէի կոանա ու ես իմը կանէի:

ԺԱՆՔ. Ո՞նց չէ. Եթէ ես ուզէի, տեսնենք դու ինչպէ՞ս ինձ պիտի չ'թողնէիր: Օ՛. Աստուած մի արասցէ որ դու այդպէս վարէիր. ես քեզ կը չարչարէի. կողերդ կը ջարդէի, կտոր կտոր կանէի ու այնպէս հոգիդ կը հանէի:

Պիկը. Ահա թէ ինչ... ուրեմն գրախտո՞մն էլ քո ձեռքից հանգստութիւն չ'պիտի ունենայի. շնորհակալեմ անկեղծութեանդ համար. կողմ. ձեզ չէի ասում թէ օյինքազն է:

ԺԱՆՔ. Այդտեղ ի՞նչ ես մըթմըթում. ծոյլ անպիտան, գնա գործդ տես:

Պիկը. Ոչ նախ և առաջ դու ինձ ասա թէ...

ԺԱՆՔ. Բոթելով էլ ժամանակ չ'ունեմ քեզ հետ խօսելու. տար այս փայտերը, օջախը վառիր որ կերակուր եփեմ...

Պիկը. Ինքդ չե՞ս կարող վառել...

ԺԱՆՔ. Կարող եմ ու չեմ կամենում, պրծաւ գնաց:

Պիկը. Անիծւի այս տեսակ կեանքը... ախ դու գետին մտնես...

ԺԱՆՔ. Ի՞նչ...

Պիկը. Ոչինչ. այ քեզ կատարեալ դրախտ:

ԺԱՆՔ. Դէ, ի՞նչն չե՞ս գնում:

Պիկը. Գնում եմ, գնում. ախ ինձոր... բոլորի պատճառը դռւ ես: Գնում է:

ԺԱՆՔ. առանձին.

Վերջապէս տարաւ. այ, հիմի լաւ է...իմ կարծիքով ամէն մի իւր կնոջ սիրող ամուսին պէտք է որ անպատճառ... ինչպէս ձեզ հասկացնեմ... պէտք է որ... չեմ կարողանում վրա բերել... մի խօսքով այնպէս լինի՝ ինչպէս իմ Պիկը... այսինքն երբէք իւր կնոջ հակառակ գործ չպիտի կատարէ և ամէն կերպ նրան հնազանդուի: Երգում է:

Գանգատում են միշտ մարդիկ

Թէ անբաղդ

Կեանք են վարում: Աշխարհը
Զէ գրախտ:

Ով կամենում է ապրել
Երջանիկ,

Բոլոր հոգով թող սիրէ
Իւր կնիկ.

Ինք թող խմէ միշտ բաժակ
Դառնութեան,

Ու հայթալթէ կեանք ուրախ
Իւր կնկան:

4) ՆՈՅՆ ԵՒ Պիկը

Պիկը. Որ մի քիչ առաջ էր մտել. Տեսնո՞ւմ ես թէ ի՞նչե՞ր ես երգում. ամեն բան պէտք է կնիկներին հաթաթենք եղել... իսկ մէկն էլ չկալ որ խեղճ տղամարդկանց մասին մտածէ. էլ ի՞նչե՞ր չեմ անում ես քեզ համար. և փոխարէնը ի՞նչ եմ ստանում. ամէն օր թուք ու մուր ու մէկ բէնը ի՞նչ եմ ստանում: ամէն օր թուք ու մուր ու մէկ բէնը ի՞նչ եմ ստանում: ամէն օր թուք ու մուր ու մէկ բէնը ի՞նչ եմ ստանում: ամէն օր թուք ու մուր ու մէկ բէնը ի՞նչ եմ ստանում: ամէն օր թուք ու մուր ու մէկ բէնը ի՞նչ եմ ստանում: ամէն օր թուք ու մուր ու մէկ բէնը ի՞նչ եմ ստանում: ամէն օր թուք ու մուր ու մէկ բէնը ի՞նչ եմ ստանում: ամէն օր թուք ու մուր ու մէկ բէնը ի՞նչ եմ ստանում:

ԺԱՆՔ. Այ, սխալվում ես. բաս թաշկինակը ոչի՞նչ.

Պիէր. Թաշկինակ. թաշկինակ... ես ի՞նչ անեմ. թաշկինակը խօ փորս չի կշացնի: ԺԱՆԵՏ. Մի ուրիշ բան էլ եմ բերել քեզ համար: Պիէր. Գլխարկ խօ չէ: ԺԱՆԵՏ. Ոչ: Պիէր. Ուրեմն, շապիկ կլինի: ԺԱՆԵՏ. Ոչ. Հասկացար. ուտելու բան է... տես, մի համեղ կարկանդակ: Պիէր. Կարկանդակ համ... ի՞նչպէս չկարողացա գուշակել... դէ տեսնեմ... ԺԱՆԵՏ. Մի քիչ խնդրիր: Պիէր. Լաւ, լաւ, մի տանիք. այսուհետեւ ամբողջ օրը պիտի աշխատեմ: ԺԱՆԵՏ. Ոչ, այդ չէ իմ ուզածը... մի համբուրիր ինձ տեսնեմ... Պիէր. Ահա, հրեշտակս. այս էլ քեզ համբոյք... ԺԱՆԵՏ. Ահա, այս էլ քեզ կարկանդակ: Պիէր. Այս ի՞նչ խելօք կին եմ ունեցել... ըհը, վերցրու կէսը քեզ: ԺԱՆԵՏ. Ա՛, շատ շնորհակալ եմ իմ բարի Պիէր... սրտով ուզում էի ուտել և իմանալ թէ ի՞նչ համ ունէ. ամբողջ ճանապարհին դրա վրա էի մտածում: Բայց լետոյ խորհեցալ թէ՝ ոչ, աւելի լաւ է որ իմ կուկուին տանեմ որ բերանը քաղցրացնէ. չէ՝ որ խեղճը ամբողջ օրը աշխատում է: Պիէր. Դժգոհութեամբ. եւ այս էլ ի՞նչպէս... տես... մինչև հիմի քրտինքը վազում է ճակատիցս իսկ ձեռներս կոշտեր են դուրս եկել... ԺԱՆԵՏ. Խզակ ջան. Է՛, ի՞նչպէս, համով էր: Պիէր. Տէր Ասուած, ի՞նչ ես ասում, կարկանդակը բաս համով չի լինի, և այնպիսի բաղդատորներ կան, որ ամէն օր ուտում են այսպիսի կարկանդակներ..., հառաջելով. Ա՛խ, եւա, եւա, եթէ դու այդ տարօրինակ ախորժակը չունե-

նայիր, ես էլ կարող կ'լինէի միշտ այդպիսի կարկանդակ վայելել: ԺԱՆԵՏ. Դեռ էլի չես մոռացել: Պիէր. Միթէ կարող է մարդ մոռանալ, երբ ստիպւած է ամէն րօ զէ յիշել... Եւ ի՞նչ տարօրինակ ճաշակ է ունեցել այդ եւան. դէ, դու, դու ի՞նքդ ասա. միթէ կարելի է այդպիսի փառաւոր և արքայավայել կարկանդակը մի որեւէ անպիտան ինձորի հետ համեմատել: ԺԱՆԵՏ. Փաղաքշանքով. Էւա է որ այդ մասին չխօսենք: Պիէր. Զեմ կարող... ոչ մի կերպ չեմ կարող... 5) ՆՈՅՆՅ և ԿՈՄՄ ԴՔ ՄՕՐԵ լսում է նրանց. ԺԱՆԵՏ. Դէ լաւ ես ե՞մ մեղաւորը որ ի՞նձ վերայ ես բարկանում: Պիէր. Ես ամենկին քեզ վերայ չեմ բարկանում: Ես Արտմի վրայ եմ նեղանում թէ նա ի՞նչու էր թողնում: Ա՛խ, եթէ ես նրա տեղը լինէի, չէի թողնի, երբէք չէի թողնի... ԺԱՆԵՏ. Դուն էլ բան ասացիր, եթէ ես էլ եւայի տեղը լինէի, երբէք ինձորների վրա չէի մտածի, թէկ ես շատ եմ սիրում. բայց վրան անգամ չէի նայի... Պիէր. Ո՞նց չէ... ԺԱՆԵՏ. Հաւատացնում եմ. «չէ կարելի» որ ասում են նշանակում է չէ կարելի, էլ աւելորդ է խօսելը... Պիէր. Իսկ եթէ սրտով ուզէիր: ԺԱՆԵՏ. Շատ էլ ուզէի, այսուամենայնիւ կ'համբերէի... Պիէր եւ դու կ'համբերէիր: ԺԱՆԵՏ. ՚ի հարկէ: Պիէր. Ամբողջ կենդանութեանդ ժամանակ... ԺԱՆԵՏ. Վրան էլ չէի նայի... Պիէր. Տեսնում էք ի՞նչ խելօքն է... արի, արի, սիրու Պիէր. Տեսնում էք ի՞նչ խելօքն է... արի, արի, սիրու Պիէր. Ական մի դրա համար համբուրեմ քեզ: Համբուրում է. Ա՛խ, նկիս, մի դրա համար համբուրեմ քեզ: Համբուրում է. Եթէ ես և դու մի դրախտն ընկնէինք... Եթէ ես և դու մի դրախտն ընկնէինք... ԺԱՆԵՏ. է՞դ որտեղից համեցիր

Պիէր. Ի՞նչ կայ... Եթէ յանկարծ գրախտում գտնուէինք... ԺԱՆԷԾ. Դուն էլ բան գտար, ի՞նչ հարկաւոր է չվիճելու բաների մասին խօսելը... 'ի զուր տեղ հալ ու մաշ ես լինում:

Պիէր. Ինչեր ասես չէի վերցնի ինձ համար, առաջին—12 հատ թաշկինակ, 8 ձի, 5 մահճակալ, 13 բարձ ու բացի դրանցից մեր Կոմսի սպասաւորի լիվրէի պէս կանաչ, կարմիր եղերքներով, ոսկեգոյն կոճակներով ու պսպղուն զարդարանքներով մէկը կարել կուտայի ինձ համար: ԺԱՆԷԾ. Իսկ Բս, Բս... Եթէ ես դրախտում ընկնէի, էլ չգիտեմ թէ ինչեր չէի անի... Նախ և առաջ անմիջապէս մի այսպէս բուռը մատանիներ ու օղեր կըդնէի, ու այնքան դերիաններ կարել կըտայի որ հաշիւն էլ չիմանայի, ժապաւէններ, գլխարկներ, ձեռոցներ, մանեակներ, թաւիշներ և աշխարհում գտնուած բոլոր բաները կունենայի: Առաւոտները ուշ վեր կըկենայի, կըհագնէի իմ անտի կ մօրէ զգեստը և կարէտը նստած քշել կուտայի շիք...: Թաւշեայ գլխարկ կըծածկէի, ոսկէ եղերքներով կարած կորսէտ կըդնէի, իսկ թմերս էլ 2 ֆրանկանոց թանկագին ապարանջներ, մետաքսեայ գուլպաներ կը հագնէի, թաւշեայ կողիկներ ու միշտ պարահանդէս կըդնայի. արալաւալաւամ... պարում է:

Պիէր. Կողմ. Տեսնում էք ի՞նչ բնաւորութեան տէր են կանայք. քիչ առաջ ինքն էր ինձ ասում, թէ հարկաւոր չէ չվիճելու բաների մասին մտածելը... իսկ ինքը ինձանից շատ առաջ գնաց... հերիք է ժանէտ, հարկաւոր չէ չվիճելու բաներու մասին մտածել... իզուր տեղ հալ ու մաշ ես լինում. աւելի լաւ է մեր խրճիթը գնանք և մեր ձաշի մասին մտածենք...

ԺԱՆԷԾ. Լաւ ասեցիր Պիէր. գնանք... տեսնում է կոմսին. ահ...

Պիէր ի՞նչ պատահեց քեզ... նկատելով կոմսին. ահ...

ԿՈՄՍ. Բարե ձեղ, բարի մարդիկ:

ԺԱՆԷԾ. Բարե պարոն. Պիէրին. այս ով է:

Պիէր. Զեմ ճանաչում.

ԿՈՄՍ. Ի՞նչ. վախեցաք:

Պիէր. Ե՞ս ոչ, բայց կինս...

ԺԱՆԷԾ. Ե՞ս... ոչ, այդ ո՞ր տեղից հնարեցիր.—գիտէք ինչ պարոն, մենք ոչ թէ վախեցանք. բայց դուք այնպէս յանկարծ որ մենք...

ԿՈՄՍ. Ես կոմս դը Մօրէն եմ. ձեր նոր դրացին և բոլորովին պատահամամբ լսում էի ձեզ:

ԺԱՆԷԾ. Ներեցէք Ձերդ Պայծառափայլութիւն, մենք այնպէս... մենակ մնացել ու... խօսում էինք...

Պիէր. Մարդս շատ բան կարող է խօսել, Ձերդ Պայծառափայլութիւն:

ԿՈՄՍ. Մի քաշւէք. Ես կատարելապէս հասկանում եմ ձեզ, և ձեր փափաքների կատարումն եմ ցանկանում. բարեբաղդաբար ես շատ հարուստ եմ և իմ հարստութիւնս ուրախութեամբ կը կիսեմ ձեզ հետ՝ մտածելով. Եթէ էլ մի պայման կատարէք. ես մի ժամկից յետոյ ապարանքումս կը յայտնեմ ձեզ այդ:

ԺԱՆԷԾ. Բայց մենք այնպէս խօսում էինք, Ձերդ պայծառափայլութիւն:

ԿՈՄՍ. Ձեզ համար աւելի լաւ, յամենայն դէպս դուք գալով ոչինչ չէք կորցնում. ժամացոյցը նայելով. տամն և մէկն է, մի ժամկից կսպասեմ ձեզ. ց'աեսութիւնն Գնում է:

6. Պիէր ԵՒ ԺԱՆԷԾ. Երկար լոռութիւնից յետոյ:

ԺԱՆԷԾ. 2. ոթափելով. Պիէր...

Պիէր. նոյնպէս. Համմեն...

ԺԱՆԷԾ. Այս ի՞նչ էր...

Պիէր. Ինչը...

ԺԱՆԷԾ. Լսեցի՞ր...

Պիէր. Իսկ դու...

ԺԱՆԷՏ. Լսեցիւ: Ե իս ոչա մայդը մազար պատ ԶՀՅԱՅ
Պիէր. Է...
ԺԱՆԷՏ. Ի՞նչ...
Պիէր. Ինչ ես կարծում:
ԺԱՆԷՏ. Զըգիտեմ... իսկ դու... բա չն ամ ԶՀՅԱՅ
Պիէր. Ես էլ չգիտեմ...
ԺԱՆԷՏ. Երազ է. այնպէս չէ: ... զու նույն մազար չով
Պիէր. Դու ինչ ես կարծում: ձեռքը նրան մեկնելով. Ապա
տեսնեմ:
ԺԱՆԷՏ. Ի՞նչ...
Պիէր. Կսմթի՛ր: Ժանէտը կսմթում է: այ... յանձնի... այս
ԺԱՆԷՏ. Ինչ եղարք: Ե բայց մայ առ որդա? ՎՀՅԱՅ
Պիէր. Ցաւում է:
ԺԱՆԷՏ. Թուշուտելով. Ուրեմն Երազ չէ: Գլուխ վԱ ԱՄԱՅ
Պիէր. Նոյնպէս. Ոչ...
ԺԱՆԷՏ. Ծափտալով. Ուրեմն իրականութիւն է... բայց այս
Պիէր. Ամենալիրական իրականութիւն...
ԺԱՆԷՏ. Ուրեմն դրախտը մերն է... անձնութիւն չի չկար
Պիէր. Մերը, հոգեակս', մերը...
ԺԱՆԷՏ. Ուրեմն գնանք:
Պիէր. Գնանք հոգիս', գնանք... կաց տեսնեմ... չ' գնանք...
իսկ պայմանը...
ԺԱՆԷՏ. Հիմիկուց ես ամեն պայմանի համաձայն եմ:
Պիէր. Դու համաձայն ես, իսկ ես ոչ գուցէ այդ...
ԺԱՆԷՏ. Բարանը քակելով. Սուս, ինչ որ է այնտեղ կ' տեսնենք.
համաձայնւիլը կամ չ' համաձայնւիլը մեր կամքը չէ...
Պիէր. Այդ էլ ճշմարիտ է. ուրեմն գնանք...
ԺԱՆԷՏ. Կաց. նախ այս մանրմունքը վերցնեմ պահեմ:
Պիէր. Ես էլ կացինը... օ այս փայտերն էլ...
ԺԱՆԷՏ. Թող, էլ զըանք հարկաւոր չեն:
Պիէր. Զէ, ժանէտ, ով գիտէ, եթէ մեզ այնտեղից...

Դուրս վոնտելու ծև է անում. այն ժամանակ պէտք կըդայ: ԺԱՆԷՏ. Զարմանում եմ թէ ինչ տրամադրութիւն ունես, վատ գուշակութիւններ անելու. ամեն ինչ հետդ վերցրի՛ր, բան չ' մոռանաս:

Պիէր. Ոչ, ամեն բան մօտս է, իսկ դու:

ԺԱՆԷՏ. Ես էլ եմ վերցրել... իսկ այստեղ թողնում եմ մեր բոլոր վէճերը...

Պիէր. Եւ քո յիմարութիւններդ:

ԺԱՆԷՏ. Դուն էլ քո ծուլութիւնդ:

Պիէր. Իսկ դու քո կոփներդ:

ԺԱՆԷՏ. Այլ մեզ հետ վերցնենք...

Պիէր. Միմիայն մեր սէրը: Արազ հեռանում են:

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր



ՏԵՍԱՐՈՒՆՐ—Կոմսի տանը մի հիւրասենեակ, ամեն տեսակ կանկարասիներով զարդարւած. ամեն կողմ ծոխումիւն, ծախակողմը սեղան՝ ամեն տեսակ քաղցրաւենիներով, միրդ և գինի... սեղանի առաջ նախարեմում տումբա, որի վերայ խոփով ծածկած մի ծաղկաման, աջ կողմը, պարտէզի վրա նայող պատուհան, հայելի և գորգեր։ Մէջտեղից է գլխաւոր մուտքը։

ԱՐԱՐԻԱԾ Բ.

1.) ԿՈՄՄ ԵՒ ԾԱԽԱ.

ԿՈՄՄ. Ըստածին. 12-ն է արդէն, իսկոյն կուզան, ծառալին. ինչ որ նրանք ինդրեն և ինչ որ կամենան անմիջապէս կրկատարէք...
ԾԱԽԱ. Շատ բարի, Զերդ պայծառափայլութիւն: Դրաց զանգակի ծալն:

2. ԿՈՄՄ, ՊԻԷՐ ԵՒ ԺԱՆԷՏ

Պիէր. Կոմսին չը տեսնելով. էօֆ'... ինչ դորդ է...

ԺԱՆՔԾ. Նայելով հայելուն. **ՏԵՍ** Պիէր, տես, կերպարանքու տես, այ էս քիթս, ատամներս, ականջս...
ՊԻԷՐ. Կոմսին տեսնելով. Սուս... Կոմսը այստեղ է...
ԳՈՄԾ. Բարե ձեզ բարեկամներս, ահա ձեր նոր բնակարանը, ինչ որ տեսնում էք այստեղ, բոլորը ժամանակաւորապէս ձերն են, իսկ եթէ իմ պայմանս կատարէք, այն ժամանակ այս ապարանքը ընդ միշտ ձերը կըլինի...
ԺԱՆՔԾ. Կատակում էք, ձերդ պայծառափայլութիւն...
ԳՈՄԾ. Երբէք, իսկ իմ առաջարկելու պայմանի կատարելը այնքան էլ դժւար չէ:

ԺԱՆՔԾ. Զերդ պայծառափայլութիւն, գուցէ դուք այնպիսի մի պայման պիտի տռաջարկէք, որ չենք կարող կատարել...

ԳՈՄԾ. Ընդհակառակը, իմ պայմանս նրանումն է կայանում, որ երեք ժամւայ ընթացքում այս ծաղկամանին ոչ ձեռք տաք և ոչ էլ բանաք. Նրանում մի գաղտնիք կայ, որ դուք պէտք չե որ գիտենաք. Երեք ժամից յետոյ կուգամ և ես ինքս բաց կանեմ խուվլը... ու ձեզ ցոյց կուտամ այդ գաղտնիքը: Եթէ իմ պատէրս պահէք, այն ժամանակ այս ապարանքը իւր բոլոր հարստութիւններով ընդ միշտ ձերը կըլինի, իսկ հակառակ դէպքում... Բայց ոչ, այդ ինձ թող մնա ցտեսութիւն, երեք ժամից յետո... այժմ ուղիղ ժամի 12 է: Գնում է:

3.) ՊԻԷՐ ԵՒ ԺԱՆՔԾ:

Երկար ժամանակ միննանց են նայում և ապա ծիծաղում
ՊԻԷՐ. Է՛, սրան ինչ էք ասում, մադամ Կուկու...
ԺԱՆՔԾ. Բաղդառութիւն... անսպասելի բաղդառութիւն, ուրիշ ոչինչ...
ՊԻԷՐ. Բոլորը մերն է: Հասկանում ես. բոլորը մերն է. նշանակում է որ ես պարոն եմ իսկ դու տիկին, հա, հա, հա. էլ չեմ կարող Աստուած վկայ, չեմ կարող զսպել

ուրախութիւնս...—Եթէ երազումս մի այսպիսի բան տեսնէի ես կը թքէի ու միւս կողքիս շուռ կըգայի. բայց ժանէտ, սա իրականութիւն է և այն էլ իսկական իրականութիւն. ահա այս էլ պարտէզն է. ինչ հիանալի տանձեր, սալորներ, խնձոր... շուռ արի. շուռ արի ժանէտ. շուռ արի... այդ խնձորները բաւական ժամանակ է որ շատ վատ են ազդում ինձ վերայ և ատելով ատում եմ. պէտք է հրամայեմ որ բոլորին էլ արմատով հանէն դուրս շպրտեն:

ԺԱՆՔԾ. Ինչո՞ւ Պիէր. թող մնան:

ՊԻԷՐ. Իսկ դրախտը. Եւմն, մոռացար...

ԺԱՆՔԾ. Բայց չէ որ կոմսը խնձորների մասին ոչինչ չասց. ամեն ինչ կարելի է բացի ծաղկամանից. կողմ. հմ... տարօրինակ պայման... ծաղկաման... հմ... հմ...

ՊԻԷՐ. Ճիշտ որ, ես ծաղկամանը մոռացել էի. Էհ, ինձ ինչ. թէգուզ 300 հատ էլ լինի. վրան անգամ չեմ նայի: ԺԱՆՔԾ. Այքը ծաղկամանից չհեռացնելով. Ես էլ նմանապէս. հը... ինչ ծիծաղելի պայման... ծաղկաման... բայց նրանում ինչ գաղտնիք կարելի է լինել. զգանքով Թո՛ւհ, զարմանալի բան... ինձ ինչ... ինչ ուզում է թող լինի. դրել են թող մնայ իւր տեղը. Այնպէս չէ՝ Պիէր... Մեքենաբար մօտենում է ծաղկամանին:

ՊԻԷՐ. Ի հարկէ... մի չտեսնած բան խօ չէ... առանց դրան էլ այստեղ շատ տեսնելու բաններ կան բաւական է որ ամեն աեսակ ուտելիքներով զարդարւած այս փառաւոր սեղանին մարդ նայի. Էլ աշխարհքում ոչ մի բանի մասին չի մտածի. ա'յ իսկական դրախտ. ինչպիսի հաց. ինչ քաղցրեղէններ, ինչ կարկանդակներ... կարկարդակները աես, ժանէտ, կարկանդակները, կարկանդակ չե՞ս ուզում:

ԺԱՆՔԾ. Ծաղկամանին նայելով. Լաւ... մի կտոր տո՛ւր...

Պիկը. Կտորս ո՞րն է. ամբողջը վերցրո՞ւ. իսկ գիշի չե՞ս
ուզում։
ԺԱՆԵՏ. Ծաղկամանին նայելով. Տնւր... եթէ համով է...
Պիկը. Հիանալի է, առ, վերցրու սա շիշ։
ԺԱՆԵՏ. Ոչ, ինձ մի քիչ տուր։
Պիկը Խայում ե՞ս ինչ է, խմիր էլի, բացի ծաղկամանից
բոլորը մերն է, խմիր. ժամի մէկն է խփում. օհօ՛... ժամանակը
ինչպէս է թռչում, մի ժամ արդէն անցել է աննկատելի
կերպով։
ԺԱՆԵՏ. Միթէ մի ժամ է անցել. հրծանքով. Փառք Աստծո
երկու ժամից ես ամէն բան կիմանամ. ծաղկամանին նայելով.
բայց հրքան գեղեցիկ է, տես', Պիկ'ր, ինչ հիանալի բան-
դակներ կան վրան, ինչ սիրուն է վիզը։
Պիկը. Իսկի չեմ ուզում նայել, քեզ էլ խորհուրդ կըտամ
որ չընայես։
ԺԱՆԵՏ Բայց ինչո՞ւ Պիկը։
Պիկը. Ուրովիետև չ'արժէ, անպէտք բան է, ով գիտէ ինչ
կարող է պատահել, աւելի լաւն այս է որ դու այս շիշին
նայես։
ԺԱՆԵՏ. Այդ ինչ մի չ'տեսնած բան է, ես ինչ պէտք է
տեսնեմ այս շիշին մէջ։
Պիկը. Այն՝ ինչ որ ծաղկամանին մէջ, սա էլ գաղտնիք
ունէ, բանալով շիշը. ահա բռնէ որ չի թռչի։
ԺԱՆԵՏ. Ի՞նչը չի թռչի։
Պիկը. Գինին ժանէտ, գինին։
ԺԱՆԵՏ. Գինին... իսկ ես կարծում էի թէ ծաղկամանի
մասին ես խօսում։
Պիկը. Գինին ժանէտ, գինին, չե՞ս տեսնում թէ ինչպէս
է փրփրում։
ԺԱՆԵՏ. Ամսամեղծ ծախով Պիկ'ր ուրեմն կարէլի է...
Պիկը. Ի՞նչը...
ԺԱՆԵՏ. Մաղկամանը բաց անել...
Պիկը. Ժանէտ, ինձ մի կատաղեցներ, թէ չէ քեզ մի այն-

պիսի ծաղկաման կուտամ որ մինչև մահդ չէս մոռանայ։
ԺԱՆԵՏ. Բայց այնպէս... քիչ... մի քիչ... դէ ի՞նչ կ'լինի
որ թողնես։
Պիկը. Զէ, չէ. չ'լինի որ մօտենաս, դու գիտես արդէն
որ ստանան բան ու գործ չունի ու մարդոց վխասելով է
զբաղւած. շնոր արի, և ծաղկամանի կողմը մի նայիր։
ԺԱՆԵՏ. Մի նայիր... իսկ եթէ նա շարունակ աջիս ա-
ռաջնէ ցցւած։
Պիկը. Ուրեմն շնոր արի։
ԺԱՆԵՏ. Շուր արի՛... այն ժամանակ քեզ ինչպէս տես-
նեմ... գիտե՞ս ինչ կայ. արի տեղներս փոխենք։
Պիկը. Էհ, չեմ ուզում վեր կենալ... դէ լաւ... տեղափոխումն։
ԺԱՆԵՏ. Ականց դնելով ծաղկամանին. Ոչինչ չէ լավում։
Պիկը Կի՞կ...
ԺԱՆԵՏ. Օհ... ինձ ինչպէս վախեցրիր։
Պիկը Բազմոցի վրայ նստելով. Սհ... ինչ լաւն է... ինչ փափուկ...
կարծես մի կոյտ ցեխի մէջ պառկեցայ, կամ անտառում
մի տեղ խոտի վերայ փուեցայ...
ԺԱՆԵՏ. Բայց ի՞նչ տիսուր է այստեղ, Պիկ'ր... այս ի՞նչ
տեսակ դրախտէ. ճշմարիտ. խրճիթումս աւելի ուրախ էր.
այստեղ գոնէ տանտիկին էի, կամեցածս անում էի, ու-
զած կողմս նայում էի. ոչ խանգարող կար և ոչ արգելող։
Պիկը. Ժանէտ. մի մտածիր թէ ինչեր ես խօսում. միթէ՞
այստեղ վատ է. և կամ ես քեզ արգելում եմ ինչ է...
ԺԱՆԵՏ. Ուրեմն կարելի է՞ չէ...
Պիկը. Ամէն բան, ամէն բան՝ բացի ծաղկամանից։
ԺԱՆԵՏ. Իսկ իմ ուզածն էլ հէնց այդ է. եթէ ես շիմա-
նամ կը մեռնեմ։
Պիկը Զէ չես մեռնի, ես գիտեմ սա նրա գործն է։
ԺԱՆԵՏ. Ո՞ւմը...
Պիկը. Սատանայի. նա քո սրտումը նստած քո բերնովն
է խօսում. ժամը 2-ն է խփում. ժամի 2-ն արդէն. շատ չէ մի

ժամ մնաց սպասելու. մի ժամ էլ համբերիր և ամէն բան
կիմանանք:

ԺԱՆԷԾ. էլ սի ըոպէ չեմ կամենում սպասել. լսո՞ւմ եռ
մի ըոպէ:

ՊԻՒՐ. Բայց ինձ համա՞ր, քո կուկուի համա՞ր, որին քաղցր
կարկանդակներ ուտացրիր, մի՞թէ շատ է մի ժամ էլ սպա-
սելը. այո՛. միմիայն մի ժամ.., յետո կոմսը կը գայ ինքը
կը բանա խուփը և գաղտնիքը ցոյց կտա. այն ժամանակ
ինչքան կամենում ես նայիր. քեզ ոչ ոք չի արգելիւ:
ԺԱՆԷԾ. Ինչպէս չէ... շատ գուրեկան բան է, որ երբ
քէֆները գայ, շնորհ անեն. բաց անեն խուփը և ասեն.
«Ահա», տե՛ս, յիմարագլուխ, տես»... չէ... մեծապէս շնոր-
հակալ եմ: Ես կամենում եմ որ առաջին անգամ ինքս
տեսնեմ, թէ չէ կը հալւեմ, կմաշւեմ, կը չորանամ—կը
մեռնեմ եթէ շտեսնեմ:

ՊԻՒՐ. Առ'ւտ, սո՛ւտ, սո՛ւտ ես ասում. ոչ կհալւես, ոչ
կմաշւես, ոչ կչորանաս և ոչ էլ կմեռնես:

ԺԱՆԷԾ. Կը մեռնե՛մ... կը մեռնե՛մ, անպատճառ կմեռնեմ...
ահ. զգում եմ արդէն որ մահս մօտ է:

ՊԻՒՐ. Հեռո՛ւ է. Աստուած վկայ հեռու է:

ԺԱՆԷԾ. Կամենալով ծաղկամանը բանալ ես էլ ինչ յիմարն եմ որ
քեզ եմ լսում:

ՊԻՒՐ. Առաջը կտրելով. երբէք, երբէք. չեմ թողնի. կմեռնեմ
ու չեմ թողնի:

ԺԱՆԷԾ. Աա... այսպէ՞ս... այսպէ՞ս ուրեմն... այժմ ես
ամեն ինչ հասկանում եմ:

ՊԻՒՐ. Փառք քեզ Աստուած:

ԺԱՆԷԾ. Բարբարո՛ս, ուրեմն ինձ սպանել ես ուզում, բայց
ոչ երբէք. քո կամքը չպիտի կատարուի. ես քո ջզրու-
պէտք է որ ապրեմ. բայց ոչ թէ այստեղ քեզ հետ, դու
ծաղկամանին պահապան կաց ապարանքում և նրա յիմար
գաղտնիքը լաւ թաքցրու. իսկ ես մեր աղքատիկ խրճիթը

կը վերադառնամ, և յուսով եմ որ այնպիսի մարդիկ կը
գտնւեն որ ինձ ոչ մի բանի կարօտ չեն թողնի:
ՊԻՒՐ. Բայց մի՞թէ մեր խրճիթը աւելի լաւ է. մի մտա-
ծիր. չորս կողմդ նայի՛ր. սա մի կատարեալ դրախտ է...
ԺԱՆԷԾ. Ես չեմ ուզում այդպիսի դրախտը. դու հէնց այս
դրախտում ինձ պիտի սպաննես... ես գիտեմ որ դու ար-
դէն ինձ չես սիրում...

ՊԻՒՐ. Ես չեմ սիրում... ինձ մի՛ յանդիմաներ, թէ չէ հի-
մի ես էլ լաց կը լինեմ... դէ՛ մի լար, վերջ տուր, բաւա-
կան է:

ԺԱՆԷԾ. Զեմ վերջացնում: Ուզում է զնալ:

ՊԻՒՐ. Կա՛ց. ո՞ւր ես զնում:

ԺԱՆԷԾ. Տուն:

ՊԻՒՐ. Բայց սպասի՛ր...

ԺԱՆԷԾ. Զէ՛. չպիտի սպասեմ...

ՊԻՒՐ. Դէ հիմի ես ի՞նչ անեմ:

ԺԱՆԷԾ. Բա՛ց արա ծաղկամանը:

ՊԻՒՐ. Կախարդել է սրան այս ծաղկամանը... նրան: Բայց
դու գիտես հոգիս որ այդ անկարելի բան է:

ԺԱՆԷԾ. Այո՛. անկարելի է... որովհետեւ... դու ինձ չես
սիրում... և երբէք չես ուզում ինձ միխթարել: Լալիս է:

ՊԻՒՐ. Լալով. Ժանէտ, մի՛ լար. թէ չէ ես էլ կուլամ:

ԺԱՆԷԾ. Բա՛ց արա ծաղկամանը:

ՊԻՒՐ. Էլի՛ ծաղկամանը. չեմ կարող ժանէտ, Աստուած
վկայ չեմ կարող. դու գիտես որ անկարելի է այդ:

ԺԱՆԷԾ. Ուրեմն անկարելի՞ է. մնաս բարով:

ՊԻՒՐ. Երթաս բարով. տէր ընդ քեզ, եթէ դու աւելի լաւ
ես համարում քո մարդուց հրաժարել, քան թէ քո յա-
մառութիւնից, այն ժամանակ տէր ընդ քեզ...

ԺԱՆԷԾ. Վերադառնալով Յամառութիւնից... լսո՞ւմ էք. նա
այս բանը յամառութիւն է համարում. կինը տանջւում է,
հետաքրքրութիւնից մեռնում է, իսկ նա այդ բանը ան-

ւանում է յամառութիւն. այդ բանից յետոյ էլ ես ոչ մի րոպէ չեմ կարող այստեղ մնալ. մնաս բարով։
Պիկը. Թող այդպէս լինի. Երթաս բարով։ Բազմոցի վերայ է պառկում։

ԺԱՆՔԾ. Նայում է նրան, յետոյ դրան է մօտնում և տեսնելով որ նա չէ ուզում իրան կանգնեցնել. Հա... դու ի՞նչ ասեցիր... մօտնում է.
Դէ ասա ի՞նչ էիր կամենում։

Պիկը. Ոչինչ։

ԺԱՆՔԾ. Դու ինձ չ'կանչեցիր...

Պիկը. Երբէք։

ԺԱՆՔԾ. Եթէ այդպէս է, մնաս բարով։

Պիկը. Գնաս բարով։

ԺԱՆՔԾ. Նստում է նրա մօտ. Պիկը...

Պիկը. Ի՞նչ կայ։

ԺԱՆՔԾ. Հոգեակս, սիրելիս...

Պիկը. Է՛... ինչ Է՛...

ԺԱՆՔԾ. Չես բաց անի։

Պիկը. Ո՛չ։

ԺԱՆՔԾ. Հաստատ...

Պիկը. Ո՛չ, ու հչ... ըունս տանում է, ինձ մի խանգարիր, մի քառորդ ժամից յետոյ կոմսը կ'զայ, իսկ ես մինչև նրա դալը քնել եմ ուզում։

ԺԱՆՔԾ. Քառորդ ժամ է պակաս ասում Ես։

Պիկը. Սյդքան էլ չի լինի, մի 13 ըովէ պիտի սպասենք։

ԺԱՆՔԾ. Ա՛հ, ահ, ահ, վատ եմ զգում, ահ, ա'հ, ա'հ...

Պիկը. Տեղից թոշելով. Ի՞նչ եղար, այ կնիկ, ժանէտ մադամ կուկու, ի՞նչ պատահեց, տէր Աստած, դու ողորմիր, մեռնում է... ժանէտ, հոգեակս, ուշքի արի։
ԺԱՆՔԾ. Ա՛հ, ահ, ահ, մեռնում եմ։

Պիկը. Մի որեէ բան չես ուզում, գինի, նարինջ, շաքարեղէն, կարկանդակ, բոլորը, բոլորը բեզ, ի՞նչ որ ուզում ես, միայն թէ 'ի սէր Աստուծոյ մի յիմարանար, մի մեռնիր։

ԺԱՆՔԾ. Ա՛հ, ցաւումէ ցաւում, այստեղ, մեռնում եմ...
Պիկը. Տէր Աստած, հիմի ես ի՞նչ անեմ, դէ հէրիք գը-
ժութիւններ անես, ժանէտ, մի մեռնիր, այս ի՞նչ յիմար
կատակներ են։

ԺԱՆՔԾ. Ա՛հ, ահ, ահ... մի միջոց կայ միայն ազատւելու,
բաց արա ծաղկամանը։

Պիկը. Գուցէ ծաղկամանն էլ բաց անեմ, միայն թէ ուշքի
արի, մի մեռնիր. է, ի՞նչպէս, հիմի քիչ լաւ ես։

ԺԱՆՔԾ. Այն քիչ լաւ եմ։

Պիկը. Է՛հ, փառք Աստուծոյ... հեռանում է։

ԺԱՆՔԾ. Այդ ի՞նչ ես անում։

Պիկը. Ի՞նչը...

ԺԱՆՔԾ. Իսկ ծաղկամանը...

Պիկը. Բայց ժանէտ, չի կարելի այդ, մի քիչ էլ համբե-
րիր...

ԺԱՆՔԾ. Ի՞նչ, դարձեալ... ահ, ահ, ահ... վատ, վատ եմ
զգում ինձ... այստեղ... ծաղկամանը թէ չէ... կ'մեռնեմ,
այ, այ, այ...

Պիկը. Ա՛հ, այս ծաղկամանը ինձ պիտի սպանէ։

ԺԱՆՔԾ. Ա՛հ... ինձ էլ... ծաղկամանը...

Պիկը. Էլի ծաղկամանը... քիչ է մնում որ գժւեմ... դու
ուրիշ խօսք չ'գիտե՞ս. բայց ի՞նչ որ էլ որ լինի չեմ բաց
անի։

ԺԱՆՔԾ. Կողմ. Ի՞նչպէս է հակառակում... մնաս բարեաւ
Պիկը, դու, դու ես մահւանս պատճառը... բայց ես նե-
րում եմ քեզ...

Պիկը. Ժանէտ, ժանէտ, ի՞նչ եղար... մեռաւ Աստած
վկա մեռաւ... ժանէտ... բաց կանեմ, Աստած վկայ բաց
կանեմ... տես մօտեցայ արդէն... բաց արա աչքդ ժանէտ...
ԺԱՆՔԾ. Դէ շնուր, շտապիր, թէ չէ բոլորովին կըմեռնեմ։

Պիկը. Է՛հ..., եա բաղդ, ի՞նչ լինելու է թող լինի... ժաղկա-
մանի խոփը բաց է անում, թոշունը դուրս է թոշում. Այ, այ, այ...
բռնեցէք... բռնեցէք...

ԺԱՆԵՑ. Վեր է Թուջում և նայում ուրախ ծափ տալով. Թոչունը...
թռչունը... թռչունը...

ՊԻՒՐ. Տեսէք ինչ շուտ լաւացաւ է...

ԺԱՆԵՑ. Նրա ծակատին խփելով. Ախմախ ախմախ... ինչու թռչունին բաց թողիր... հիմի ինչ պիտի անենք հէ... իշխ գուխ...
ՊԻՒՐ. Էսում էք, լսում էք... մեղաւորը ես եմ եղելու. ես
քեզ չէի՞ ասում, չէի՞ նախազգուշացնում...

ԺԱՆԵՑ. Ինձ նախազգուշացնում էիր, իսկ ինքդ էշանում
էիր դադարկագլուխ:

ՊԻՒՐ. «Ախ... օխ... ցաւում էր» բղաւողը դու չէի՞ր...
ԺԱՆԵՑ. Եւ դուն էլ հաւատում էիր, արսաղների թագաւոր

ՊԻՒՐ. Հաւատալուս համար դադարկագլուխ և իշագլուխ
եղա:

ԺԱՆԵՑ. Իհարկ է իշագլուխ ես, թռչունին ինչու փախցրիր:
ՊԻՒՐ. Բայց չէ որ դու ուզում էիր:

ԺԱՆԵՑ. Մաղրելով. «Բայց չէ որ դու...» շատ էլ ուզում
էի. հէնց ամէն ուզածը կը կատարե՞ն...

ՊԻՒՐ. «Ախ, վախ, մեռնում եմ, ծաղկամանը» բղաւողը
դու չէի՞ր...

ԺԱՆԵՑ. Շատ էլ բղաւում էի, ապհուց, հէնց կինդ լալիս
է թէ չէ ինչ անելդ չես գիտում: Դու պէտք է չ'թողնէիր.
քո խօսքը առաջ տանէիր. ինչ էլ որ լինում է իսկոյն կնոջդ
փէշերի տակն ես մտնում: Բամբակ, բամբակ, յիմարագլիխի
մէկն ես դու, ուրիշ ոչինչ...

ՊԻՒՐ. Խեղճ տղամարդիկ. բոլորիդ բաղդն էլ այս է.
օֆ. օֆ. իսկ այս ինչ դրախտ էր, ինչ կահկարասիք
ինչ զինիններ. ինչ կարդ ու սարք. ինչ կարկանդակներ
և այս բոլորը... Քրի՞ր... թռաւ... ժամի երեքն է խփում. Ժամի
երեքն է. մնաք բարնվ, ամենայն փարթամութիւն...

4.) ՆՈՅՆՔ ԵՒ ԿՈՄՄ

ԿՈՄՄ. Կարծեմ ձեզ չ'սպասեցրի և ձիշտ ժամանակին եկա:

ՊԻՒՐ. Կողմը, Ընդհակառակը, շատ ուշացաք...

ԿՈՄՄ. Ցուտով եմ, որ պայմանը ձեզ ծանը չը թւաց:
ՊԻՒՐ. Իմ մասին, ի հարկէ ոչ:

ԺԱՆԵՑ: Ձերդ պայծառափայլութիւն, ձիշտ է որ նրան
մի քիչ դժւար էր թւում, բայց ինձ...

ՊԻՒՐ. Այո՛, և նա, բանը... այնպէս...

ԿՈՄՄ. Շատ ուրախ եմ, ուրեմն ծաղկամանը ձեզ չէ հետաքրքրում:

ՊԻՒՐ. Այո՛ ձերդ պայծառափայլութիւն, հիմի արդէն հետաքրքրում է:

ԿՈՄՄ. Խփելով ծաղկամանին լսում է. Հմ... ձայն չ'կայ...
այս ինչ նշանակում: Ո՞րտեղ է սրա գաղտնիքը...

ՊԻՒՐ. Քրի՞ր... թռաւ ձերդ պայծառափայլութիւն...
ԺԱՆԵՑ. Բայց ես այս բանում բոլորովին անմեղ եմ...

ՊԻՒՐ. Ինչպէս թէ անմեղ:

ԺԱՆԵՑ. Խուփը բաց անողը դու չէի՞ր...

ՊԻՒՐ. Խուփը... բայց ուրիշ ինչ կարող էի անել...
ԿՈՄՄ. Այնպէս դառնաւ այնպէս դառնաւ որ, ձերդ պայծ-
առափայլութիւն... որ մէկը ասեմ, էլ ախ ու վախ, էլ մեռ-
նում եմ, էլ իստերիկա, ես էլ ակամայ...

ԺԱՆԵՑ. Եւ սա տղամարդ է, ձերդ պայծառափայլութիւն...
որ մէկը ասեմ, սրա անունն էլ տղամարդ է, փոխանակ
ինձ ճշմարտութեան ճամբին բերելու, ինքն էր ինձ ճա-
նապարհից դուրս հանում:

ԿՈՄՄ. Մենք բոլոր մարդիկու էլ միևնոյն ընդհանուր հիւ-
անդութեան ենք ենթակա, այն է ունեցածով երբեք գոհ
չ'մինել... ձեր յարդեա խրճիթը վերադարցէք և հաւատացէք
որ նրանում դուք աւելի երջանիկ կ'լինէք: Եթէ որևէ կարիք
գնում է:

ԺԱՆՔԸ. Պիէր...

Պիէր. Ժանք...

ԺԱՆՔԸ. Ինձ վերայ չե՞ս բարկացած:

Պիէր. Երբէք:

ԺԱՆՔԸ. Ների՞ր ինձ Պիէր, բոլոր յանցանքը իմս էր, խոստովանում եմ յանցանքս և կ'աշխատեմ ապագայում ուղղել: Համբուրիր ինձ տեսնեմ:

Պիէր. Բոլոր սրտով: Համբուրում է:

ԺԱՆՔԸ. Ներում ես:

Պիէր. Հոգւնվ:

ԺԱՆՔԸ. Ուրեմն, հաշտե՞նք:

Պիէր. Այժմ և միշտ:

ԺԱՆՔԸ Դէ շուտ տուն վերադառնանք, քանի մեզ չեն վռնդել...

Պիէր. Մանաւանդ որ մեզ այստեղ պաշտպանող էլ չի լինի

ԺԱՆՔԸ. Ժողովուրդին ցոյց տալով. ի՞սկ...

Պիէր. Դժւար թէ... դէ շտապիր տուն գնանք և մեր սիրով մեր խրճիթը աշխատենք մի նոր դրախտի վերածել: Արագ գնում են:

ՎԱՐՍԳՈՅՐ



100-36-3-398

ԳԻՒ կ 30 կուկ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0319832

12.189

